

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու
24.12.2016թվականի N 67-Ն որոշման

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

ք. Արթիկ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը	3-4
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	6
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	7-9
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	10
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանախատեսումները	11-35
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	36-38
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն.....	39-40
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	41
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	42
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	43
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	44-46
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....	47
6. Ծրագրերի անձնագրեր.....	48-72

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մեզ պետք է ուղեկցի առաջիկա հինգ տարիների ընթացքում՝ այն դառնալու է մեր կայուն առաջընթացի կարևոր հիմքը: Ինչպիսին պետք է մենք տեսնենք մեր վարդապույն քաղաքի ապագան, ինչ քայլեր պետք է ձեռնարկենք, որ մեր համայնքի բնակիչը իրեն ավելի ապահով և վստահ զգա, քաղաքը լինի ավելի գեղեցիկ ու բարեկարգ, գրավի մեր բնակիչներին ու մեր հյուրերին: Այս հարցերի պատասխանը մեզ պետք է տա մեր հնգամյա զարգացման ծրագիրը: Ու ինչպիսի քայլեր էլ որ մենք ձեռնարկենք, ինչ ծրագրեր էլ որ մշակվեն, ամենի առաջ մեր տեսադաշտում պետք է լինեն մեր բնակիչները, մեր երիտասարդները, մեր աշխատավորները, մեր թոշակառուները: Մեր բոլոր քայլերը պետք է ուղղված լինեն մարդկանց խնդիրների լուծմանը, քաղաքում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծմանը: Քաղաքապետարանը մշտապես պետք է բաց լինի մեր բնակիչների համար, որպեսզի մարդիկ կարողանան իրենց հուզող հարցերը ներկայացնեն և արագ լուծում ստանան, քաղաքում տիրի արդարության և վստահության մթնոլորտ ու որպեսզի ներկայացված հնգամյա ծրագիրը դառնա հիմնավոր և ֆինանսապես ապահովված փաստաթուղթ: Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները հետևյալն են՝

1. Համայնքում նոր արտադրամասերի և գործարանների ստեղծում, դրանով մեր բնակիչների համար 600-800 նոր աշխատատեղերի ստեղծում:
2. Փողոցների վերանորոգում, ասֆալտապատում, սալապատում, կենտրոնական փողոցների մայթերի նորոգում, կանաչապատում, ծառատնկում:
3. Փողոցների լուսավորության ցանցի անցկացում
4. Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, շենքերի բակերի բարեկարգում, խաղահրապարակների ստեղծում

5) Համայնքի ենթակայության, հիմնարկների վերանորոգում, գույքով, ինվենտարով ապահովում, արդիականացում, չջեռուցված հիմնարկների ջեռուցում:

Ինչպես Հայաստանի ցանկացած բնակավայր, մեր համայնքը նույնպես ունի իր հիմնական պրոբլեմները, զարգացման խոչընդոտները և դրանց ծնող պատճառները:

Արթիկ համայնքի համար հիմնական պրոբլեմներից է գործազրկության բարձր մակարդակը, աշխատատեղերի պակասը և դրանից բխող ազգաբնակչության սոցիալական վատ վիճակը, արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թիվը: Քաղաքն ունի խիստ կլիմայական պայմաններ երկարատև և խիստ ձմեռներով, ձյան կայուն ծածկույթով, որը բնակիչների համար լրացուցիչ սոցիալական դժվարություններ է ստեղծում:

Քաղաքի բազմաբնակարանային 9 շենքեր ունեն 3-րդ աստիճանի վթարայնություն, որոնք ժամանակին չամրացնելու դեպքում շենքերի վթարայնության աստիճանը ժամանակի ընթացքում կմեծանա, և անհնար կդառնա դրանց հետագա բնակեցումը:

Քաղաքի տարածքով անցնող երկու հեղեղատարները՝ Մովրովի և Բմբուլենց ձորերը, մշտապես լցվում են լքված հանքերի մնացորդներով, մանր քարերով ու ավազով, տիղմով, ձնհալի և ուժեղ անձրևների հետևանքով հեղեղումներ են առաջացնում և կարող են մեծ վնաս պատճառել համայնքային ենթակառուցվածքներին ու բնակիչներին: Այդպիսի լարված իրավիճակ առաջացավ 2016 թվականի հունիս ամսին:

Քաղաքի շատ փողոցներ ունեն վերանորոգման, ասֆալտապատման խիստ անհրաժեշտություն, կենտրոնական փողոցների մայթերը չեն վերանորոգվել երկար ժամանակ, որը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:

Համայնքի զարգացման համար կան նաև մի շարք խոչընդոտներ, որոնք հրատապ լուծում են պահանջում:

Համայնքային ենթակայության շատ հիմնարկներ երկար ժամանակ է, ինչ կապիտալ վերանորոգման չեն ենթարկվել, զգացվում է գույքի պակաս և արդիականացում:

Բազմաբնակարանային շատ շենքերի տանիքները չեն վերանորոգվել, շենքերի բակերը անբարեկարգ են, չկան կառուցված խաղահրապարակներ:

Համայնքի կոյուղագծերը խիստ կարիք ունեն վերանորոգման:

Քաղաքը չունի առանձին ոռոգման համակարգ, բնակիչների տնամերձ հողամասերի ոռոգումը իրականացվում է խմելու ջրի միջոցով:

3) Գյուղատնտեսական տեխնիկան խիստ հնացել է, ֆիզիկապես մաշվել է, որը բացասաբար է անդրադառնում հողատարածքների մշակման արդյունավետության վրա:

Քաղաքում քիչ են կանաչ տարածքները, ծառերը, հանգստի գոտիները:


Հնգամյա զարգացման ծրագրի բազմակողմանի մշակման, քննարկման և հաստատման նպատակով համայնքում ստեղծվել է ժամանակավոր հանձնաժողով կազմված քաղաքապետարանի աշխատակիցներից, ավագանու անդամներից, հասարակայնության ներկայացուցիչներից: Հանձնաժողովը իր աշխատանքը կազմակերպել է ըստ հաստատված ժամանակացույցի, հրավիրելով նիստեր, հանդիպումներ, բազմակողմանի քննարկումներ: Նպատակը մեկն է՝ ավելի թափանցիկ և հրապարակային դարձնել հնգամյա զարգացման ծրագրի մշակումը, նախապատրաստական աշխատանքներին մասնակից դարձնել ավելի մեծ թվով շահագրգիռ մարդկանց: Հրավիրված նիստերի ժամանակ հանձնաժողովը կատարել է համայնքի իրավիճակի բազմակողմանի գնահատում, կարիքների և հիմնախնդիրների բացահայտում, դրանց փաստաթղթավորում: Հանձնաժողովի կողմից կազմակերպվել է հանրային քննարկում՝ համայնքի իրավիճակի, կարիքների և հիմնախնդիրների շուրջ:

Ծրագրերի ֆինանսական, նախահաշվային կանխատեսումները, հաշվարկները կատարվել են աշխատակազմի մասնագետների կողմից:

Կարծում եմ իսկապես կատարվել է մեծ ծավալի ուսումնասիրություն, վերլուծություն և կանխատեսում:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը կդառնա առաջիկա հինգ տարիների գործունեության մեր հիմնական փաստաթուղթը:

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Մ. ՎԱՐԴԱՆԻԱՆ

